



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Ձևավորված գեղեցիկ ավանդույթով, յուրաքանչյուր ամավերջին Վեհափառ Հայրապետի բարձր հանդիսապետությամբ Մայր Աթոռի միաբանները, ճեմարանականները, դասախոսները և Մայր Աթոռի պաշտոնետությունն անցնող փարուն հրաժեշտ են փալիս յուրահատուկ հանդիսությամբ: Իբրև քաղցր պարտականություն Գևորգյան Հոգևոր ճեմարանի կենսությանը և ճեմարանականներին է վերապահված ամանորյա հանդիսության կազմակերպումը: Ինչպես միշտ, այս փարի ևս ճեմարանականները պարվով կապարեցին իրենց գործը, որի հավաստումն էր ներկաների բարձր փրամադրությունը:

Հանդիսությունն սկսվեց «Տերունական աղոթք»-ով, ՎՎ Օրհներգի և Հոգևոր ճեմարանի քայլերգի կատարումներով: Որից հետո բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Մարգարյանը՝ ասելով.

«Մի քանի ժամից պարունություն կդառնա 2004 թվականը ևս:

Եթե ընդունենք, որ պարունությունը փաստերի, կարարած-չկարարած գործերի հիշողության արձանագրումն է, ապա կարող ենք ասել, որ 2004 թվականը մեր ժողովրդի և մեր Ս. Եկեղեցու համար եղավ խաղաղ իրագործումների հիշարժան փարի:

Մենևորի և գալիք Ս. Ծննդյան փոներն իրենց խորհրդով բոլորիս մեզ էլ խոհեր ու մրածումներ են առաջացնում:

Անցնող փարվան հեղադարձ հայացք ներելով՝ կարող ենք արձանագրել, որ 2004 թվականը Նորին Սուրբ Օծության ղեկավարությամբ Մայր Աթոռի, մեր Սուրբ Եկեղեցու և Գևորգյան Հոգևոր ճեմարանի համար դարձավ բեղմնավոր: Տարին պսակվեց նորանոր ձեռքբերումներով՝ եկեղեցաշինության, քրիստոնեական մեր առաքելության իրագործման և մեր Ս. Եկեղեցին նոր ձեռնադրված սպասավորներով համալրելու առումով:

2004-ին մեծ շուքով նշվեց բոլորիս համար նվիրական այս հասարակության՝ Գևորգյան Հոգևոր ճեմարանի 130-ամյակը:

Դեկտեմբեր ամսվա 25-ին ճեմարանը փվեց իր հերթական հունձքը՝ 17 շնորհունակ սարկիսիականների ձեռնադրությամբ: Լիահոյս ենք, որ նրանք կարողարացնեն Նորին Սրբության սպասելիքները:

Անցնող փարում տեսչական կազմի, ուսումնական խորհրդի և մեր դասախոսական խմբի օգնությամբ փորձեցինք ուսումնական գործընթացը կազմակերպել ավելի արդյունավետ, և այդ գործում հաջողություններ արձանագրեցինք՝ այն

հարակ գիրակցությանը, որ Ճեմարանի ամեն մի հաջողություն նպաստելու է Մայր Աթոռի շենսպանը, հերևաբար և մեր ժողովրդի բարօր գալիքին:

Նախիրենության մեջ մեզ բաժին հասած այս ժամանակամիջոցը մեր րևօրի-
նությանն է հանձնված, և մենք ենք այն իմաստավորողը մեր փոքր, բայց խիար
կարևոր իրագործումներով:

Միևյի ներկաներ, հանդիսավոր այս առիթով ողջունելով և նախապես շնոր-
հավորելով Ձեզ ամենբիդ՝ թոյլ րվեր րարենուրի այս երեկոյին բոլորիդ, ինչու
է՛նան մեր ողջ ժողովրդի սևունից շնորհավորել մեր սիրելի Վեհափառին գալիք
Ճեմարանի կապակցությանը և հանուն Գերագոյն Տոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի
միաբանության, Գևորգյան Տոգևոր Ճեմարանի րեւջության, դասսխոսաների, սս-
ների և ներկաների մաղթել, որպեսզի Բարձրյալի Աջը հովանի և պսխասրան լինի
մեր հայրենի երկրի, Մայր Աթոռի և նրա սանխուջ Գահակալի վրա:

Թող մեր սիրելի, ստաքինագարդ Տայրասրերի կյանքը լինի սանվիշր և երկար՝
ի րխառ և ի պայժառություն մեր Ս. Եկեղեցու և ի բարօրություն իր սիրելի հորիք»:

Այնուհերև միաբանության խոսքը ներկաներին ողղեց Մայրավանքի երիրասարդ մի-
արաններից Տոգեշնորի Տ. Նորայր արեղա Միմոնյանը.

«Այսօր մենք ամենքս հավարվել ենք այս դահլիճում, որպեսզի հրաժեշր
րսնք 2004 թվականին: Այսօր մենք ինքնեքս հաշվերվություն ներկայացնելով
Աարծուն և մեզ՝ պերք է քննենք, փնրրենք ու գրնենք այն բոլոր թերությունները,
որոնք մենք թոյլ ենք րվել այս սանցող րարում: Փնրրել ու գրնել, որպեսզի
նկող րարում այդ բոլոր թերությունները, սխակները աշխարենք ողղել:

Ասում են, թե այս օրը ի կարար են սծվում մարդկալին բոլոր ցանկություններ-
ը, ոսրի այսօր ստավել ևս մեր աղոթքներում հիշենք և աղոթենք առ Բարձրյալն,
որպեսզի Տերը խաղաղության մեջ րսհի ազգը հայոց, Եկեղեցին Տայասրանյայց,
որպեսզի մեր սահուններում խաղաղությունը րհրի:

Վեհափառ Տեր, այսօր ինձ բախր է վիճակվել հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմի-
սծնի միաբանության բոլոր սնդամների, բոլոր իմ եղբայրների շնորհավորել
Ձերդ Մրքությանն ամանորյա այս րոնի կապակցությանը: Ճնորհավորելով Ձերդ
Մրքությանը՝ աղոթք ենք բարձրացնում առ Աարված, որպեսզի բարձրյալն Աար-
ված երկար րարիների կյանք և ստողություն պարզնի Ձերդ Մրքությանը, որ-
պեսզի Ձեր գավազանը միշր ծաղկյալ լինի և այդ գավազանով հովվեր և ստաջ-
ևորղեր մեր հայ ժողովրդին դեպ սարազս »:

Միաբանության խոսքին հաջորղեցին հոգեթով շարականներն ու երգերը Ճեմարանի
երգչախմբի կարարմամբ, որն արղեն րարիներ շարունակ բարձր վարպերությամբ դեկա-
վարում է Էջմիսծնի փոխքաղաքակեր պրն Ռուբեն Ճարքաթյանը:

Գեղեցիկ կարարումներից հերք դասախոսների անունից խոսք սասց Ճեմարանի Պար-
մության ամբիոնի վարիչ պրն Գնել Գրիգորյանը.

«Տաշված ժամեր են մնում մինչ այն պսիղ, երբ մենք հրաժեշր կրանք պար-
մություն դարձող 2004 թվականին և կրիմավորենք նոր՝ 2005 թվականը: Արղեն
վաղուց Մայր Աթոռում բարի ավանդույթ է դարձել Նոր րարվա շեմին ի մի բերե-

յու հին փարուս կապարվածը, գևահարելու, արժեվորելու այն և խորհրդածելու գալիք փարուս ևոր ծրագրերի ու մրահդացումների մասին: 2004 թվականը մեզ համար հորեյանների փարի էր: Լրացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի գահակալության հինգ փարին: Թեև հինգ փարին կարճ ժամանակամիջոց է հեռուար ծրագրեր կազմելու, առավել ևս դրանք կյանքի կոչելու համար, սակայն մենք հիացմունքով սկանարեաը եղանք Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ մեր Եկեղեցու ևոր կյանք ու ևոր շունչ ձեռք բերելուն:

Այսօր ամենուրեք՝ Հայրենիքում կամ ևրս սահմաններից շար հեռու, ուր սիռված են հայ ժողովրդի բեկորները, վեր են խոյանում քրիստոնեական հավարի կենարոները, հայոց եկեղեցիները, որոնց մեծ մասի հիմնարկերն ու օծումը կապարվում է Ձերդ Մրբության կողմից: Անգևահարելի է Վեհափառ Հայրապետի ևերդրումը դարերով սրբագործված ու վավերացված Հայոց Առաքելական Եկեղեցու դավանանքն անադարր պահպանելու և օրարամուր ու եկվոր փարերից այն պաշտպանելու գործում: Դրս վառ ապացույցը վերջերս Հայաստանում ազար գործելու իրավունք արացած աղանդներից մեկի վերարերյայ Նորին Մրբության հրապարակավ անգիջում ու խիար ընդվզումն էր, որը համաժողովրդական հավանության արժանացավ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ եղել և մնում է աշխարհասիյուռ հայությանը Հայրենիքին կապող, ևրան համարմբող միակ կենարոնը: Ուր էլ լինի հայ մարդը, Հայրենիքում, թե ևրս սահմաններից հեռու, միևնույն է, ևս իր հայցքը միջր հառած է պահում Սուրբ Էջմիածինն:

2004 թ. մենք օրինական հարարությանը ևշեցիքը Հայաստանում միակ հոգևոր բարձրագույն ուսումնական հասարարության՝ Գևորգյան Կոգևոր Ծեմարանի 130-ամյա հորեյանը: Ծեմարանի 130-ամյա րոնակարարությանը ոչ միայն վեր հանվեց հայ ժողովրդի հոգևոր ու մրավոր կյանքում այդ հասարարության անցյալում ունեցած սկևառու դերը, այն ևսիանշվեցին այն կարևոր ձեռքբերումները, որոնց այսօր հասել է մեր հոգևոր Մայր Բուրը:

Վեհափառ Տեր, ձեր համակ ուշարությանը և անդուլ ջանքերով Ծեմարանն այսօր դարձել է կրթական ու գիտական կարևոր կենարոն: Այսրեղ կրթվում ու դասարարակվում է Հայ Եկեղեցուն ծառայագրվելու պարրասարակամ սպասավորների մի հոծ բանակ: Ծեմարանը Հայաստանի կառավարության կողմից արացել է բարձրագույն ուսումնական հասարարության կարգավիճակ, ևորացվել ու արմարապես վերանայվել են դասավանդվող առարկաների ծրագրերը, Ծեմարանում դասավանդելու հրավեր են արացել մեր Հանրապետությունում երկար փարինների մանկավարժական ու գիտական աշխարանքի փորձ ունեցող հայրենի և կարող ուժերը: Նրանց անունից հավասարիացնում են Ձեզ, որ պարրասար ենք իրականացնելու բազմարևույթ ու բազմարովանդակ բոլոր այն ծրագրերը, որոնք դրվում են Ծեմարանի առջև:

Դարեր շարունակ Հայոց Եկեղեցին եղել է հայ դարության, հայոց մշակույթի հովանավորն ու զարգացնողը: Այսօր ոչ միայն շարունակվում են այդ ավան-

դույթները, այլև նոր բովանդակություն է հաղորդվում այդ վեճ գործին: Բացառիկ նշանակություն վայրվ մեր երկրի կյանքում մտավորականության դերին, Դուք, Վեհափառ Տեք, նրանց համախմբում եք Մայր Աթոռի շուրջը: Առանձնակի կարևորություն ունեն գիտության, մասնավորապես հայագիտության զարգացման գործում Ձեր ներդրած ջանքերը: Ձեր գործուն մասնակցությամբ 2003 թ. Գիտությունների սզգային ակադեմիայի և ԵՊՏԻ հեղի կազմակերպված Նայագիտական միջազգային առաջին գիտաժողովը գիտության բնագավառում դարձավ մի րեասակ ուժերի համախմբման և սզգային միասնության գաղափարի դրսևորում, գաղափար, որի ջարագովը եղել և մնում եք Դուք, Ձերդ Մրբություն:

Միրևի բարեկամներ, րոնակյան այս պահին թույլ րվեք շնորհավորել Վեհափառ Նայրապերին, Նրան մադթել արևշարություն, երկար ու երկար րարիներ, իսկ Նորին Մրբության հովված հոբին մեր հավարացյալ ժողովրդին ուժ, կարողություն ու բարեկեցություն:

Շնորհավոր Նոր րարի և Մուրբ Ճնունդ:

Ամանորյա շնորհավորանքի ջերմ ու անկեղծ խոսքերը համեմվում էին երզգախմբի հոգեպարար կարարումներով:

Ուսանողության խոսքը ներկաներին ուղղեց Ճեմարանի Զ լսարանի սան Նայկ սարկավազ Բարսեղյանը.

«Ներթակյան անգամ համախմբվել եևք Նոր րարվա և Բեթղեհեմի Մուրբ մուրի առաջ՝ խորհրդամելու մեր անցյալի, իսադադության, արդարության մասին, ադթելու և գորանայու համար: Նոր րարին հույսի րոն է, իսկ Մուրբ Ճնունդը՝ կյանքի, և բնակնևարար կասկածից վեր է, որ այս երկու հրաշալի իրադարձությունների միջև կո ներքին կոս: Պարսահակյան չէ, որ Նոր րարվա առաջին րոնը Բրիսարոսի Ճնեղյան րոնն է, քանզի Բրիսարոս Բեթղեհեմյան մուրից համայն մարդկությանը վերամայնեց իսադադության պարզամը, որպնզի մարդիկ հասկանան, թն ինչպնն պերք է կարողանան արժեվորել իրենեց րարիները:

Նրածեզր րարով 2004-ին՝ լցվում եևք նոր երագներով, նոր խոհերով դիմավորելու համար 2005-ը: Միածամանակ յուրաքանչյուրս րորձում եևք վերլուծել և արժեվորել անցած րարին, որ իր նվանումներով ու կորուստներով, ոզկեք թե ջուզկեք, իր արրացողումը գրավ պարմության և մեր կյանքի էքերում: Մի րեասակ հաշվերվություն եևք ներկայացնում ինքներո մեզ: Իսկոսպնև, սս մի հիսնալի առիթ է յուրաքանչյուրիս համար: Ամեն բակից առաջ մարդ արարածը որոշում է, թն ինչ պերք է անի, և հերո վերլուծում է, թն ինչ կարողացավ անել: Եվ երբեմն րարբերությունը շար մեժ է լինում: Իրակնևում, հիարկել, շար լսվ կլիներ, որ բոլորի իղները և բարի նպարակներն իրակնևացած լինեին:

Ամանորը մարդկանց պարրակնևություները հիշեցնելու օր է, ինքնամարդման և բարոյակն վերագարթոնքի օր: Մեր հին աշխարհի իմաստունները Նոր րարին բնութագրել են իբրև նորոզված կյանքի խորհրդանիշ, քանի որ մարդու կյանքի արժեքը սայրած րարիների մեջ է, որրեղ, ինչ խոսք, պերք է դրսևորվի

նրա հոգևոր և ինստիտուցիոնալ հաստատությունը և կայսրությունը: Նոր փարի, այսինքն՝ նորից ու վերստին նորաստեղծում:

Բնակչությանը, յուրաքանչյուրն ունի նոր ակնկալիքներ և սպասումներ: Մեր հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Ամենայն հայոց հայրապետի գլխավորությամբ, 1914-ից է նոր հույսով ու եռանդով հանդես գալիս նոր թվականը, որ այն պիտի լինի խաղաղության, երջանկության և բարգավաճման փարի: Քիչ հեռավոր էր Մայր Աթոռի քաղցրալուր զանգերն ազդարարեն հին փարվա ավարտը և նոր փարվա սկիզբը, ազգիս հայրապետի առաջնորդությամբ աղոթքի ենք կանգնելու ի խաղաղություն և ի բարգավաճումն հայոց աշխարհի: Որպեսզի նոր փարվա առաջին օրը աղոթքի նման բացվի ոչ միայն Թորգոմա ազգի, այլև համայն աշխարհի համար, որպեսզի բոլոր ազգերը, խաղաղության մեջ ապրելով, ձեռք ձեռքի առաջնորդվեն դեպի Բեթղեհեմյան պայծառ աստղը:

Վեհափառ Տեր, վարսահ ենք, որ 2004-ը Ձեզ համար իմաստավորվեց նոր ձեռքբերումներով և արդարացրեց Ձեր բոլոր հույսերը: Նոր փարվա սեպին գոհունակության խորին զգացումով, պայծառ լավատեսությամբ ուսանողության լավագույն նվերը Ձերդ Մրբության և հավատարացյալ հայրորդիներին կլինի մեր պարտավանությունը՝ ոխարելու և հեղինակելու Առաքելախառնաբար մեր Սուրբ Եկեղեցու կանոններին, մեր հոգևոր հաստատությունը և լուրջ գիրակցական պարասխառնարվության զգացումը: Զգացում, որ ուշ թե շուր պարտադիր կերպով համակում է յուրաքանչյուր ճեմարանական: Յանկանում ենք հավատարիացնել շնորհագարդ հայրապետիդ, որ ճեմարանական այսօրվա սերունդը պարտաբար է բորանակեր կերպով ներդնելու իր համար ուժերը Ամենայն հայոց հայրապետի լուսավոր փեսիքի իրականացման ճանապարհին:

Շնորհավորելով Ձերդ Մրբության և ամբողջ Մայրավանքի միաբանության Նոր փարին և Սուրբ Ծնունդը՝ մաղթում ենք, որ ամսնորյա այս գիշեր քաղցրալուր զանգերի դողանքների ներքո ավերաբեր հրեշտակներն Աարծո օրհնությունը բերեն Ձեզ՝ ի փառս և ի պայծառացումն հայաստանյայց Սուրբ Եկեղեցու և նրա հավատավոր զավակների:

Մայր Աթոռի միաբանության կողմից խոսք ասաց ավագագույն միաբաններից Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապյանը.

«Վեհափառ Տեր, այս երեկոն նմանվում է հուշիկ սահող իրիկվա: Հուշիկ ժամեր են, ժամանակներ են, զավիս և անցնում են և ծիրանի գույների և լույսերի զգացումներ են առաջ բերում մեր սրտերի մեջ: 2004 թ. աշխարանքի, նվիրումի, առաքելության փարի եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության համար, Գևորգյան հոգևոր ճեմարանի սաների համար և հարկապես, Վեհափառ Տեր, Ձեզ համար: Եղաք բոլոր նորաբաց եկեղեցիների օձնանը, որպեսզի այդ եկեղեցիներից լույսը հեղեղանանս իջնե հոգիների մեջ մեր ժողովրդի զավակների: Դուք շինարար Կաթողիկոս եք և մի կատույցը չավարտած՝ մյուսն եք սկսում: Մայր Աթոռի շրջապարի մեջ մենք թեն ապրում ենք հանգիստ և ապահով, սակայն երբ մեր պարտիանները բացում ենք և աշխարհին նայում,

արևանում ենք, թե աշխարհում ինչպիսի դժվարին, աղևուրբեր վիճակներ կան, պարերազմական վիճակներ կան, որոնք մեր աղոթքների, մեր պաշտամունքի կարիքն ունեն, որպեսզի պակասեն, և միաբանության պարտականությունն է առաջին հերթին ամենօրյա, հասնապազօրյա աղոթքով կարողանալ հասնել թե՛ մեր ժողովրդին և թե՛ աշխարհի որևէ անկյունում փառասպող ժողովուրդներին:

Այո, աշխարհի մեջ դժբախտությունները շարք են, բայց ուրախությունն էլ պետք է անպակաս լինի, և այդ ուրախությունը մենք պետք է փակեք մեր ժողովրդին Վեհապատ Հայրապետի օրհնակով, թե ինչպես Նա հասնում է Հայաստանի և արտասահմանի բոլոր թեմերին և այնպեղ Իր խոսքով, Իր պատգամով և Էջմիածնի լուսավորչյան խոսքերով կարողանում է համոզել և բերել Մայր Աթոռ իբրև կապ և Մայր Աթոռի իբրև մաս և բաժին»:

Մտնեցավ ուսանողների և հարկապես միաբանների երկար սպասված կաղանջներին և վիճակահանության արարողությունը, որն է՛լ ավելի բարձրացրեց ներկաների փրամադրությունը:

«Էջ Միածինն ի Հօրե՛» շարականից հետո հանդիսությունը եզրափակեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Կաթողիկոսը՝ իր հայրապետական օրհնությունը բաշխելով ներկաներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆՃՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՎԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Միրելի Սրբազաններ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, Գևորգյան Հոգեվոր ձեմարանի սիրելի դասախոսներ ու պաշտոնություն և շարք սիրելի ուսանողներ:

Նոր փարվա շեմին ուրախությամբ է լեցուն ամենքիս հոգին, լեցուն է նաև նոր սպասումներով ու լավապետությամբ: Այս հուսառատ զգացումով հրաժեշտ ենք փալիս 2004 թվականին և առանձնացնում ու վերհիշում մեր ապրածը, մեր ձեռքբերումներն ու կորուստներն անցնող փարում:

Այս պահին աղոթքով ենք հիշում մեր Եկեղեցու բարձրաստիճան մի շարք եկեղեցականների, ովքեր ի Տեր ննջեցին 2004 թվականին, և վերստին Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Բարձրյալ մեր Տերն Իր արքայության մեջ ընդունի նրանց արդար հոգիները:

Անցնող փարում ունեցանք հաջողություններ ու ձեռքբերումներ, որոնք առավել հույս ու վստահություն են ներշնչում եկեղեցականներին և բարեպաշտ մեր ժողովրդին, որ եկող՝ 2005 թվականը նորանոր իրագործումների և ուրախությունների է առաջնորդելու մեր կյանքը՝ ի սեր մեր Եկեղեցու պայծառության ու նրա առաքելության մեր ժողովրդի կյանքում և համաքրիստոնեական կյանքում: Պետք է ասել, որ Հայաստանի անկախությամբ ընձեռնված նախորդ փարիների ազատության պայմաններում մեր Եկեղեցու ձեռքբերումները թեպետ նկատելի ու նշանակալի են, սակայն շարունակում ենք հեռու մնալ այն ցանկալի իրավիճակից, երբ Եկեղեցին ամբողջապես ներկա լինի մեր ժողովրդի կյանքում: Մենք դեռևս շարունակում ենք առավելապես գոհացնել ծիսաարարողական պահանջները մեր ժողովրդի: Բնակա-

նաբար, ծխաարարողական կյանքն անհրաժեշտ մասն է մեր առաքելության, սակայն գլխավոր նպատակն ու ձգտումը պիտի լինի մեր ժողովրդի հոգևոր ճանաչողության ու ապրումի գորացումը: Խոսքի, հոգևոր խոսքի, Քրիստոսի Ավերարանով հոգուն սնունդ բերող անդադար խոսքի և ուսուցման կարիքն ունենք այսօր, որը պիտի ջանանք առավել ու առավել լրացնել:

Ես հույս ունեմ, որ 2005 թվականը մենք կկարողանանք առավել չափով դարձնել քարոզչության փարի՝ քրիստոնեական իմացությամբ ու հավատով զորացնելով մեր թեմերը, զորացնելով մեր համայնքները: Փառք Աստծո, փարեցարարի ավելի մեծ թվով եկեղեցական սպասավորներ են ծառայության կոչվում, որոշակի առաջընթաց արձանագրում ենք նաև նոր համայնքներ ձևավորելու գործում: Եվ Մենք աղոթում ենք, որ մեր եկեղեցականների ծառայությունը, նախանձախնդրությունն ու ջանքն արգասավորվեն Բարձրալի օրհնությամբ ու ամենաապր շնորհներով՝ հանուն մեր Եկեղեցու շինության և Իր Սուրբ Անվան փառավորության:

Տարեմուտի այս ուրախ առիթով Մեր գնահատանքն ենք բերում Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բոլոր սպասավորներին Մայր Հայրենիքում և Սփյուռքի թեմերում, Մեր գնահատանքն ենք բերում հոգևոր կրթօջախների սպասավորներին՝ դասախոսներին ու պաշտոնեությանը և բոլոր ուսանողներին, ովքեր պարարավում են դառնալու Տիրոջ Սուրբ Մեղանի արժանի սպասավորներ: Թող Տերը մեր միշտ մեզ հեղ լինի, զորավիզ դառնա մեր բարի մտածումներին ու գործերին, ուժ և կարողություն և բարվոք ընթացք ու ճանապարհ պարզեցնելով մեզ:

Աղոթք եմ բարձրացնում նաև առ Աստված՝ հայցելով, որ անասան պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Նվիրապետական Աթոռներով, պարզևի մեր Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին քաջատոջ ու երջանիկ կյանքի բազում օրեր, որպեսզի իրենց նվիրյալ ծառայությամբ նոր շինություն բերեն մեր Եկեղեցուն:

Աղոթքս է նաև, որ Աստված խաղաղության մեջ պահի-պահպանի աշխարհը համայն և հայրենի մեր երկիրը և մեր ժողովրդին պարզևի բարի օրեր, խաղաղ ու սպեղծագործ աշխատանքի արդյունավորություն, առաջընթաց ու բարգավաճում: Թող 2005 թվականը մեր միասնական ջանքերով, սիրով ու նվիրումով մեր Եկեղեցու պարմության մեջ արձանագրվի հաղթանակներով:

Բոլորիդ շնորհավորում ենք Նոր փարվա առիթով և մաղթում լավատեսության ոգի և կամք՝ մեր պարտականությունների ու պարասխանարվությունների մեջ անթերի առաջ ընթանալու:

Աստված մեզ առաջնորդ և օգնական:

Շնորհավոր Նոր փարի:

Նավարտ հանդիսության միաբաները Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ շարժվեցին Մայր Տաճար՝ աղոթքի կանգնելու, որպեսզի Նոր փարվա արշալույսը հաջողությամբ բացվի ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ համայն աշխարհի համար:

ՎԱՅԿ ՄԱՐԿԱՎԱԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ